

ԲԱՆՁԻՍԱՐԱՑ

եղել է Ղրիմի խանության կենտրոնը: Թաթարների տիրապետության շրջանում տյատեղ բնակվել է 300 հայ ընտանիք: 1632 թ. գրված ձեռագիր հիշատակարաններից մեկում նշված է. որ տեղի հայերն ունեցել են Ս. Սատվածաժին անվամբ եկեղեցի⁹¹, ժայռափոր կերտվածքով: Նույնպիսի եկեղեցի, Գրիգոր Լուսավորչի անունը կրող, հիշատակվում է 1700 թվականի մեկ այլ ձեռագիր մատյանում⁹²: Գրիգոր Լուսավորչի եկեղեցում հինգ ամիս շարունակ քահանայագործել է ակա-նավոր րանաատեղծ Խոջատուր Կաֆայեցին (Խաչգոռուղը)⁹³: Մ. Բժշկյանի շրջագայության ժամա-նակ այստեղ ապրել են քսան հայ ընտանիք և ունեցել են Ս. Սատվածաժին քարաշեն, ղմրեթավոր եկեղեցին⁹⁴: Ճանապարհորդը նշում է ըողմաթիվ լաչքարերի առկայությունը, սակայն գրտնք մեզ չեն հասել:

391. Բախչիսարայ. Թանգարանի քարեդարան:

Կառույցի բարավոր՝ կրաքարից: Բերված է Կուրինո գյուղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցուց: 1594 թ. հունարեն արձանագրության աջ կողմում մանրատառով՝ 5 տող.
ԵՍ ՄԱՆՈՒԿ/Ի ՈՐԴԻ ԱՍՎԱ/ՏՈՒՐ ԵՐԷՑ/ Ի ԹՎ. ՌՃԽԲ (1693) ԻՆ:

Բախչիսարայի պատմահնագիտական Թանգարանի աշխատակիցները միջնադարյան Ուս-պենսկի տաճարի քարանձավներից մեկում հայտնաբերել են հետևյալ եռատող հայերեն արձա-նագրությունը, որի շուտանկարը մեզ ուղարկեց (1968 թ. հունիսի 18-ին) հիշյալ Թանգարանի տնօրեն Ի. Զուրիկովը:

392.

ՎԱՐԴԵՐ/ԷՍ ԱՆՏԻՐԱՍ/ՕՎ:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ-ԽԵՐՍՈՆԵՍ

Սեաստոպոլ քաղաքում հայկական պատմական հուշարձաններ չկան: Խերսոնես քաղաք-Թանգարանի ֆոնդերում (քարեդարանում) այժմ պահպանվում են մարմարակերտ ընդմաթիվ ըն-կորներ, որոնցից մեկի վրա հաղիվ ընթերցվում է՝

Մ-Ր ՄԱԽԻ-ՄՕՐ/:

Ն. Յա. Մառը հրատարակել է Խերսոնեսում գտնված հայերեն երկու մակագրություն⁹⁵, որոնցից մեկը հայանարել է 1902 թ. խաչաձև հատակագծով կառուցված նորագյուտ եկեղեցու որմին, ուր նա ընթերցել է.

393.

Այն Ո/րեհա Ա/՝ Այս Ի աԼաժԼաժ Ե Մխիթար ծառայ Այ...

91 Տե՛ս Վ. Ա. Միքայելյան, Ղրիմաֆայոց պատմություն, Երևան, 1989, էջ 44:

92 Նույն տեղում, էջ 44-45:

93 Նույն տեղում, էջ 45:

94 Մ. Բժշկյան, էջ 276:

95 Н. Марр, Замётки о двух армянских надписях, найденных в Херсонесе. Отдельный оттиск из „Известии императорской археологической комиссии“, N.9, с. 38.